

ԾԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ,
ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒՄ ԵՒ
ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԵՐՈՒՄ

Արտակ Վարդանեսան

Բարբառագիտական ուսումնասիրութիւններում Ճահուկ-Վայքի կամ Վայոց ձորի միջբարբառ է անուանուել Հիւսիսային Նախիջեւանի եւ Վայոց ձորի մեկ տասնեակից աւելի տեղաբնիկ բնակավայրերի (Վայոց ձորի Արենի, Աղաւնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուտ, Հորս, Զիւլայ, Ռինդ, Վերին Ազնաբերդ գիւղերը, իսկ մինչեւ 1988 թուականը՝ նաեւ Նախիջեւանի Ազնաբերդ եւ Օձոփ գիւղերը) լեզուական սերտ առնչութիւն ներկայացնող խօսուածքները¹:

Անցեալի բարբառագիտական աշխատանքներում այս բնակավայրերի խօսուածքները համարուել են Արարատեան բարբառի խօսուածքներ՝ չնայած Հրաչեայ Աճառեանը իր հիմնարար «Հայ բարբառագիտութիւն» աշխատանքում չի ընդգրկել ո՛չ Արարատեան, ո՛չ Արցախ-Սիւնիքի, ո՛չ էլ որեւէ այլ բարբառի տարածման սահմաններում²: Ուստի միայն առանձին աշխատանքով ուսումնասիրութիւնը կարող էր վեր հանել խօսուածքախմբում առկայ բարբառային իւրօրինակ իրողութիւնները եւ ճշտել նրա դիրքը մերձակայ բարբառների նկատմամբ:

Մեր ուսումնասիրութիւնների արդիւնքում պարզուել է, որ ըստ ձեւաբանա-

կան դասակարգման՝ միջբարբառը պատկանում է Հայ բարբառների արեւելեան խմբակցութեան «Ում» ճիւղին, ըստ հնչիւնաբանական դասակարգման՝ ունի հպական բաղաձայնների երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ: Հայ բարբառների դասակարգման բաղմայատկանիչ վիճակագրական սկզբունքի կիրառմամբ միջբարբառը միջակայ դիրք է գրաւում Հայ բարբառների արեւելեան խմբակցութեան հիւսիսարեւելեան բարբառախմբի Արարատեան եւ Զուղայի բարբառների միջեւ, յատկանիչներով փոքր-ինչ հեռացած է Արցախ-Սիւնիքի բարբառից:

Ճահուկ-Վայքի միջբարբառի եւ մերձակայ բարբառների միջեւ աշխարհագրական եւ լեզուական մերձաւորութիւնների համընկնման փաստը հաստատում է այս բարբառային միւտորի տեղաբնիկ լինելու իրողութիւնը: Հետեւաբար, ինչպիսի՞ն է տարածքի վիճակների, որմնանկարների մակագրութիւնների եւ ձեւագրերի յիշատակարանների լեզուն: Արդեօ՞ք աղերսներ ունի տարածքի աւանդական բարբառի հետ:

Պարզուում է, որ Վայոց ձորի եւ յարակից տարածքների միջնադարեան վիճակի արձանագրութիւններում³ եւ ձեւագրերի

- 1 Ա. Վարդանեսան, Վայոց ձորի միջբարբառը, Եր., 2004, էջ 5-16:
- 2 Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն,- Էմիգրեան ազգագրական ժողովածու, հտ. Բ, Մուկուա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 37, 61-62:
- 3 Ղ. Ալիշան, Սիսական տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 145,

167: Ա. Այվազեան, Նախիջեւանի վիճագրական ժառանգութիւնը. Ժամուկ-Ժամապօնք գալատ, հտ. Զ, Եր., 2010 էջ 40-42: Կ. Մաթնուեան, Նորավանքի վիճագրերը և յիշատակարանները, Եր., 2017, էջ 114:

յիշատակարաններում՝ արտացոլուած բարբառային խօսքի որոշ յատկանիշներ, իրօք, առնչութիւն ունեն հայերէնի տարածքային այս տարբերակի հետ: ԺԴ-ԺԵ դարերի այդ յիշատակութիւններում առկայ բազմաթիւ բառեր ու բառակապակցութիւններ ակնյայտ աղերսներ ունեն ներկայ միջբարբառի հետ, որոնք բերում են ստորեւ:

Յիշատակութիւն	Միջբարբառ
Ջոնս թիւացաւ	Ծեղըս թիւացալ
Ծնհատր	Ծընհալօր
Միմ կոլ տուի	Միմ կօլ տըլի(մ)
Գրում ի, մուկն ցեթեց	Կըրըմ ի(մ), մուգը ցեթեց
Ծապտէմն մէկ օր Ծակքարովն ջուր տուի	Ծապտէմը միմ օր Ծակքարովը ճուր տըլի(մ)
Անծիմ յերիմջ մորթեցի	Անծիմ հերիմջ մօրթեց(ի)մ
Մատս մանկաղով կտրել ի,	Մաղըս մանգէղօվ կըղըլ ի(մ),
հէնչանք կարացի գրել	(հ)ընչանք կարացի(մ) կըրէմ
Թէ չէ՝ նա վայ տուր	Թէ չէ՝ նա վայ տուր
Էս տետրս	Էս տեղրագըս
Իմ քիրն մեռաւ	Իմ քիրըս մեռալ
Անծեռանալի	Անծեռանալի
Ղազար արեղիմ	Ղազար արեղիմ
Միմ չարէք հողը	Միմ չարէք հողը

Տարածքում աւանդաբար կիրառուած յատուկ անունների տեղական բարբառին

4 Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան (խմբագիր՝ Է. Աղայեան, կազմողներ՝ Լ. Մուրադեան, Մ. Մուրադեան, Ս. Անթոնեան), հտ. Ա, Եր., 1972, էջ 39-41):
 5 Ա. Այվազեան, Ազնաբերդ, Երևանի համալսարան, թիւ 3, Եր., 1978, էջ 23-27:
 6 Ա. Վարդանեան, Ազնաբերդ. նախնականահայրութեան վերջին ամրոցը, Եր., 2001, յաւելում, էջ 2-6:

հարազատ ձեւեր էին պահպանուել Ազնաբերդ գիւղի եկեղեցիների որմնախորշերի եւ մերձակայքի ԺԳ-ԺԷ դարերի խաչքարերի, տապանաքարերի վիմագրերում⁵:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու որմում տեղադրուած խաչքարերից մեկին առկայ էր Ըղըստակէս (<Արիստակէս) անձնանունը, իսկ Սուրբ Յովհաննէս եկեղեցու մերձակայքի տապանաքարերին՝ (Ամիրիճան եւ Ավում(իս) անձնանունները: Երեքն էլ Ազնաբերդում եւ շրջակայ տարածքում աւանդաբար կիրառական անձնանուններ են համարապատասխանաբար Ըղըստակէս, Ամըջան եւ Ավում տարբերակներով⁶:

Օծոփի Ս. Աստուածածին վանքի եւ շրջակայ տարածքի խաչքարերի ու տապանաքարերի վրայ նոյնպէս պահպանուել էին տարածաշրջանին բնորոշ անձնանունների միջբարբառի հնչիւնափոխութեան օրէնքներով հնչիւնափոխուած ձեւեր՝ Աքկար, Թաթեոս, Սհակ, Ըսթեփանոս, Ջաքարա, Կուկուլ եւ այլն⁷: Վերջինս իգական անձնանուն է եւ փոխառութիւն է վրացերէնից (<ՅՄՅՄՇՇ Գուգուլի («կկու» նշանակութեամբ):

Ազնաբերդ գիւղանուան Ըզնաբերդ բարբառային ձեւն էր պահպանուել գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու 1867 թուականին վերականգնուած որմնակարների մակագրութիւններից մեկում⁸: Նոյն մակագրութիւններում տեղ են գտել նաեւ բարբառային այլ բառեր՝ քվօրն («քրոջ»), անօրն («աներոջ») եւ այլն. ձեւեր, որոնք նոյնպէս խիստ բնորոշ են տեղական խօսուածքներին:

7 Ա. Այվազեան, Նախիջևանի վիմագրական ժառանգութիւնը. Ծահուկ-Ծահալօցք գաւառ, հտ. 2, Եր., 2010, էջ 44-48:
 8 Ա. Այվազեան, Ջնաբերդի Ս. Գրիգոր եկեղեցու որմնակարները, Բանբեր Երևանի համալսարանի, թիւ 1, Եր., 1977, էջ 246-252:

Միջբարբառին հարազատ ձեւեր են նաեւ Վայոց ձորի եւ հիւսիսային Նախիջեւանի տարածքում յիշատակուած մի շարք այլ յատուկ անուններ: Որոշ վիճազբերում, օրինակ, Բուրթեր անձնանունն ունի Բուրթել բարբառային ձեւը (բարբառում՝ Պուրթել)⁹, Օրբելը՝ Ուրբել¹⁰, Արատեւը՝ Արադեւ¹¹, Թանատի վանքը՝ Թանատայ վանք, Հրաշքաբերդը՝ Հրշկաբերդ¹², ակնյայտօրէն խօսուածքին հարազատ են նաեւ տեղանունների Աղնցոց բերդ, Ըոնդի, Ըրվեմք, Փշոնք¹³, Աշոդք¹⁴ եւ շատ այլ ձեւեր:

Փաստօրէն, յիշատակութիւններում առկայ են ծահուկ-Վայքի միջբարբառին բնորոշ հնչիւնական եւ ձեւաբանական յատկանիշներ արտացոլող բազմաթիւ դրսեւորումներ՝ ոչ շեշտակիր վանկում այ > ր հնչիւնափոխութիւն (Ազնաբերդ > Ըզնաբերդ (Ըզնապեդո), Հրաշքաբերդ > Հրշկաբերդ (Հրրշկապեդո), բառասկզբում ձայնեղի խլացում (ձեռք > ծեռ, Գուգուլի > Կուկուլ (Կուգուլ), ոչ երկբարբառի պարզեցում ոչ > ի հնչիւնափոխութեամբ (թոյլ > թիւ, քոյր > քիր (քիր), այ երկբարբառի պարզեցում՝ այ > է հնչիւնափոխութեամբ (մայր > մեր, այս > էս, ցայտել > ցեթիլ), բառամիջում եւ բառավերջում խուլի ձայնեղացում (Արատես > Արադես, Թանատ > Թանատ), բառասկզբի ե հնչիւնի դիմաց բարբառային հնագոյն տարբերակ ա-ի առկայութիւն (եղիձ > աղիձ), ր, ո թրթռուն ձայնորդներից առաջ օ > ու հնչիւնափոխութիւն (Օրբել > Ուրբել), տեղանունների հոլովում ա հոլովմամբ (Թանադ-Թանատայ), ազգակցութիւն ցոյց տուող բառերի հոլովում ներքին օ հոլովմամբ (քրոջ-քվօրն, աներոջ-անօրն), էն վերջաւորութեամբ բացառական (շափաթ-շապտէնը), բայի անցեալ

անկատար ժամանակի օժանդակ բայի պարզեցում (գրում էի > գրում ի (կըրում ի(մ), ել լծորդութեան բայի անցեալ կատարեալի ոչ ցոյական կազմութիւն (տուեցի > տուի (տըլի(մ) եւ այլն):

Յատկանշական է, որ յիշատակութիւններում առկայ են նաեւ միջբարբառի բառապաշարային առանձնայատկութիւնների դրսեւորումներ՝ աղիձ («եղիձ»), հէրիձ («երինջ»), ցեթիլ («միզել») եւ այլն: Միջինհայերէնեան շրջանից միջբարբառին անցած բառերից նա («բայց, սակայն») շողկապը, ընչանք («այնչափ») դերանունը: Միջին հայերէնի նայ («բայց, սակայն») ¹⁵ շողկապը պահպանուել է հէնց յիշատակութիւնում պահպանուած թէ չէ՝ նա բառակապակցութեան մէջ, որը անխաթար առկայ է նաեւ ներկայ բարբառում. Էսնաշը կիւր, թէ չէ՝ նա կաձէս կըլիսիդ («Այս ճաշը կեր, եթէ ոչ կը լցնեմ գլխիդ»), պահպանուել է նաեւ ընչանք («այնչափ») դերանունը (յայնչափ(ք) > հանչաք||հեհնչաք > ընչանք), որը միջբարբառում կիրառուում է ընդամենը նոր հոմանիշին զուգահեռ. Ընչանք ըղաչանք արիւմ, էգալ վօշ («Այնքան աղաչանք արեցի, չեկա»):

Այսպիսով, Վայոց ձորի եւ յարակից տարածքների միջնադարեան վիճազիր արձանագրութիւնների, ինչպէս նաեւ որմնանկարների մակագրութիւնների եւ ձեռագրերի յիշատակարանների լեզուի ուսումնասիրութեան արդիւնքում պարզուում է, որ դրանցում ժամանակին արտացոլուել են առայսօր գործառող տարածաշրջանի տեղաբնիկ բարբառի ձեւաբանական, հնչիւնաբանական եւ բառապաշարային որոշ յատկանիշներ. փաստեր, որոնք եւս մի անգամ

9 Ղ. Ալիշան, Աշ. աշխ., էջ 96:
 10 Նոյն տեղում, էջ 97:
 11 Նոյն տեղում, էջ 143-144:
 12 Կ. Մաթևոսեան, Աշ. աշխ., էջ 94:

13 Ս. Օրբելեան, Միւնիքի պատմութիւն (թարգմանութիւնը, Աերածութիւնը և ծանօթագրութիւնները՝ Ա. Արրահամեանի), Եր., 1986, էջ 395-396:
 14 Ղ. Ալիշան, Աշ. աշխ., էջ 97:
 15 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, Եր., 2009, էջ 565:

հաստատում են Ճահուկ-Վայքի միջբարբառի տեղաբնիկ լինելու իրողութիւնը:

Ամփոփում

Բարբառագիտական գրականութեան մէջ Ճահուկ-Վայքի կամ Վայոց ձորի միջբարբառ է կոչւում Վայոց ձորի եւ հիւսիսային Նախիջեւանի տասնեակից աւելի տեղաբնիկ բնակավայրերի լեզուական սերտ առնչութիւն ներկայացնող խօսուածքները:

Ըստ ձեւաբանական դասակարգման միջբարբառը պատկանում է հայ բարբառների արեւելեան խմբակցութեան «Ում» ճիւղին, ըստ հնչիւնաբանական դասակարգման՝ ունի հպական բաղաձայնների երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ: Հայ բարբառների ուսումնասիրման բազմայատկանիչ վիճակագրական դասակարգման սկզբունքի կիրառմամբ պարզուել է, որ միջբարբառը միջակայ դիրք է գրաւում հայ բարբառների արեւելեան խմբակցութեան հիւսիսարեւելեան բարբառախմբի Արարատեան եւ Զուղայի բարբառների միջեւ, յատկանիշներով փոքր-ինչ հեռացած է Արցախ-Սիւնիքի բարբառից:

Ճահուկ-Վայքի միջբարբառի եւ մերձակայ բարբառների միջեւ աշխարհագրական եւ լեզուական մերձաւորութիւնների համընկնման փաստը հաստատում է այս բարբառային միավորի տեղաբնիկ լինելու իրողութիւնը:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել Վայոց ձորի եւ յարակից տարածքների միջնադարեան վիմագիր արձանագրութիւնների, որմնանկարների մակագրութիւնների եւ ձեռագրերի յիշատակարանների լեզուն: Ուսումնասիրութեան արդիւնքում պարզուել է, որ դրանցում արտացոլուել են տարածքի խօսուածքների ձեւաբանական, հնչիւնական եւ բառապաշարա-

յին յատկանիշները. փաստ, որը եւս հաստատում է միջբարբառի տեղաբնիկ լինելու մասին:

The Jahuk-Vayk Interdialect in Rock Inscriptions, Colophons and Fresco Inscriptions

Abstract

In the dialectological literature, the Jahuk-Vayk or Vayots Dzor interdialect refers to the dialects of more than a dozen autochthonous villages of Vayots Dzor and northern Nakhijevan that have a close linguistic connection.

According to the morphological classification, the interdialect belongs to the "Um" branch of the eastern grouping of Armenian dialects, according to the phonetic classification it has a two-step system of consonants. Thanks to the application of the principle of multi-attribute classification of Armenian dialects, it turned out that the interdialect occupies an intermediate position between the Ararat and Jugha dialects of the northeastern dialect group of the eastern group of dialects of the Armenian language and is slightly distant from the Artsakh-Syunik dialect.

The fact of the coincidence of geographical and linguistic proximity between the interdialect and the neighboring dialects confirms the essence of this dialectal unit as autochthonous.

The purpose of the work is to explore the language of medieval rock inscriptions, colophons, inscriptions on the frescoes of Vayots Dzor and adjacent territories. As a result of the study, it turned out that they reflect the morphological, phonetic and lexical features of the dialects of the area: a fact that also confirms the autochthonous nature of the Jahuk-Vayk interdialect.